

Նախագիծն ընդունված է
«Հայբուսակ» համալսարանի գիտական խորհրդի
3/15 նիստում

Հաստատում եմ
Համալսարանի ռեկտոր՝
Ս.Լ. Հարությունյան

«ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ)
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայբուսակ համալսարանում հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթուղթը սահմանում է համապատասխան ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, դասընթացների, կրթական ու հետազոտական մոդուլների կազմն ու ECTS կրեդիտներով արտահայտված աշխատաժամկետները:

1.2. Հետազոտողի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական բաղադրիչից՝ հետազոտական և ուսումնական, որոնց աշխատաժամկետների բաշխումն ըստ ուստարիների ներկայացված է *Աղյուսակ 1*-ում.

Աղյուսակ 1. Հետազոտողի ծրագրի հետազոտական և ուսումնական ծավալները

Ուստարի	I	II	III	Ընդամենը
Հետազոտական բաղադրիչ, <i>կրեդիտ</i>	32	46	44	122
Ուսումնական բաղադրիչ, <i>կրեդիտ</i>	28	14	16	58
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	60	60	60	180

1.3. Առկա ուսուցմամբ հետազոտողի պատրաստման տևողությունը 3 տարի է, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 4 տարի: Հետազոտողի կրթական ծրագիրն իրականացվում է ասպիրանտի ուսումնառության անհատական ծրագրի համաձայն՝ պահպանելով ավարտական պահանջներում սահմանված դրույթները:

1.4. Ծրագրի հիմքում դրված է հետազոտողի որակավորման աստիճանի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված 180 կրեդիտ գիտաուսումնական աշխատաժամկետ, որը առկա ուսուցման մեկ ուստարվա համար կազմում է 60 կրեդիտ, իսկ հեռակայում՝ 45 կրեդիտ: Առկա ուսուցմամբ ասպիրանտի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (60 կրեդիտ / 2 կիսամյակ / 20 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ (1,125 կրեդիտ կամ 33,75 ժամ՝ հեռակա ուսուցման դեպքում):

1.5. Ուսումնական կառուցամասի աշխատաժամկետը ծրագրի 180 կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է 58 կրեդիտ, իսկ հետազոտական կառուցամասինը՝ 122: Ծրագիրը բաղկացած է 1-ից մինչև 6 կրեդիտ աշխատաժամկետով մի շարք դասընթացներից և ուսումնական ու հետազոտական մոդուլներից, ինչպես նաև 110 կրեդիտ ծավալով ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքից (թեկնածուական ատենախոսությունից):

1.6. Առկա ուսուցմամբ հետազոտողի կրթական ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, գնահատման ձևերը, ինչպես նաև ըստ տարիների ուսումնական և հետազոտական բեռնվածությունների բաշխումը ներկայացված է Հավելված 1-ում:

2. ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ուսումնական բաղադրիչ

Ծրագրի ուսումնական բաղադրիչը բաղկացած է ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, պրակտիկաներից, ատեստավորումներից: Առաջինը ծառայում է հետազոտողի որակավորման համար անհրաժեշտ ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երկրորդը ապահովում է հետազոտողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ երրորդը՝ նրա գիտամանկավարժական հմտությունների զարգացումը: Ավարտական ատեստավորումը հիմք է հանդիսանում հետազոտողի որակավորում շնորհելու համար:

2.1.1. Ընդհանուր պատրաստվածության աշխատածավալը 20 կրեդիտ է: Ծրագրում այս բաղադրիչի դասընթացների առկայությունը նպատակաուղղված է ասպիրանտների ընդհանրական (փոխանցելի) Կարողությունների ձևավորմանը: Այն ներառում է 1-ից մինչև 6 կրեդիտ աշխատածավալով վեց պարտադիր և մեկ ընտրովի դասընթացներ:

2.1.2. Մասնագիտական պատրաստվածության կրթամասն ընդգրկում է հինգ կամ վեց՝ 2-ից մինչև 3 կրեդիտ աշխատածավալով ընտրովի դասընթացներ և 7 կրեդիտ աշխատածավալով որակավորման քննություններ: Ծրագրում կրթամասի ընդհանուր աշխատածավալը սահմանվում է 22 կրեդիտ, որից մինչև 6 կրեդիտ ասպիրանտը պետք է լրացնի «Հայրուսակ» համալսարանի մագիստրոսական ծրագրերի այն դասընթացների ցանկից, որոնք նա չի ուսումնասիրել նախորդող կրթական աստիճանում, սակայն որոնք կարող են օգտակար լինել իր հետազոտական թեմայի արդյունավետ կատարման համար: Մնացած կրեդիտները կազմում են ասպիրանտի գիտական ղեկավարի հետ համատեղ ընտրվող երեք մասնագիտական դասընթացները (9 կրեդիտ) և 7 կրեդիտ ծավալով երկու որակավորման քննությունները մասնագիտությունից:

2.1.3. Պրակտիկաները ծրագրում կազմում են 10 կրեդիտ աշխատածավալ, որից մինչև 4 կրեդիտը կարող են լինել հետազոտական բնույթի պրակտիկաները, իսկ մնացածը՝ գիտամանկավարժական: Վերջինս նախատեսում է բակալավրիատում գործնական և սեմինար պարապմունքների, լաբորատոր աշխատանքների անցկացում, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքի ղեկավարում՝ 1 կրեդիտ = 30 ժամ դասընթացի բեռնվածության չափով: Պրակտիկաները կազմակերպվում են ասպիրանտի գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Ատեստավորումը կատարվում է կատարողականը հաստատող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

2.1.4. Ատեստավորումը ծրագրում կազմում է 6 կրեդիտ աշխատածավալ և բաղկացած է ավարտական ատեստավորումից, որը հիմք է ծառայում ասպիրանտին հետազոտողի որակավորում շնորհելու և նրա ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու համար: Այն իրականացվում է տվյալ մասնագիտական ոլորտի համար կազմված պետա-

կան որակավորման հանձնաժողովի կողմից՝ համապատասխան կարգով և ատեստավորման չափանիշներով /Ավարտական ատեստավորման կարգը և չափանիշները տրվում են առանձին փաստաթղթով:/:

2.2. Հետազոտական բաղադրիչ

Ծրագրի հետազոտական բաղադրիչին հատկացվող 122 կրեդիտները բաշխվում են *գիտական սեմինարներին և աշխատաժողովներին* հետազոտողի մասնակցության, *ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և թեկնածուական ատենախոսության* պատրաստման վրա:

2.2.1. Գիտական սեմինարը (աշխատաժողովը) տվյալ ծրագիրն իրականացնող կառույցի (ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող և կանոնավոր գործող կոլեկտիվ քննարկումների շարք է (համատեղված մագիստրոսի կրթական ծրագրի սեմինարների հետ), որի ընթացքում ասպիրանտին ցուցաբերվում է տվյալ մասնագիտական ոլորտում գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու ունակությունները և հմտությունները: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում, որից ասպիրանտը պետք է հավաքի 12 կրեդիտ:

2.2.2. *Գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության պատրաստում:* Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն նույնպես կատարվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում: Թեկնածուական ատենախոսության պատրաստումը և նրա պաշտպանությունը ասպիրանտի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է առկա ուսուցման 6-րդ կիսամյակում: Գիտահետազոտական աշխատանքի և ատենախոսության պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 110 կրեդիտ աշխատածավալ:

3. ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. Հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար ասպիրանտը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի առնվազն 150 կրեդիտ, որը ներառում է նրա գիտակրթական ծրագրի ինչպես հետազոտական, այնպես էլ՝ ուսումնական բաղադրամասերը:

3.2. Ուսումնառության անհատական ծրագրի կրթական մասը (ներառյալ ատեստավորումները) պետք է կազմի 58 կրեդիտ, որից 20-ը՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, իսկ մնացած 16 կրեդիտը՝ պրակտիկաներից և ավարտական ատեստավորումից:

3.3. Ծրագրի հետազոտական մասը պետք է կազմի առնվազն 92 կրեդիտ, որից՝ 12-ը պետք է կազմեն գիտական սեմինարները և մասնակցությունը աշխատաժողովներին, իսկ մնացած 80-ը՝ ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը և թեկնածուական ատենախոսության պատրաստմանը:

3.4. Հետազոտողի որակավորման աստիճանը շնորհվում է համապատասխան պետական որակավորման հանձնաժողովի կողմից ավարտական ատեստավորումը հաջողությամբ անցնելու արդյունքում:

3.5. Ավարտական ատեստավորման հիմնական չափանիշ է հանդիսանում ԵԲԿՏ /Եվրոպական բարձրագույն կրթության տարածք/ որակավորումների հենքով բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (շրջափուլի) որակավորման համար սահմանված մի շարք համընդունելի պահանջների կատարումը, համաձայն որի՝ հետազոտողի որակավորում շնորհվում է ասպիրանտներին, ովքեր.

- ցուցաբերել են իրենց մասնագիտական բնագավառի համակարգային իմացություն,
- վարժ տիրապետում են իրենց մասնագիտական բնագավառի գիտական հետազոտության մեթոդներին,
- ցուցադրել են գիտական հետազոտության թեմա առաջադրելու, դրա հետազոտումը նախագծելու, իրականացնելու և որպես գիտական ավարտուն աշխատանք ամփոփելու իրենց ունակությունները,
- իրենց գիտական հետազոտություններով որոշակի ներդրում են ունեցել գիտության իրենց բնագավառում, իսկ նրանց աշխատանքները հրատարակվել են հեղինակավոր հրատարակություններում,
- ունակ են վերլուծելու, գնահատելու և ձևակերպելու նոր և համալիր գաղափարներ,
- իրենց մասնագիտական թեմաների շուրջ կարող են մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվել գիտնականների լայն շրջանակի և հանրության հետ,
- ունակ են կազմակերպելու և ղեկավարելու մասնագիտական աշխատանքային խմբեր՝ լուծելու ինչպես գիտական, այնպես էլ հասարակական և տնտեսական նշանակության խնդիրներ:

Այս պահանջները բնութագրական են բարձրագույն կրթության երրորդ՝ հետազոտողի որակավորման բոլոր գիտակրթական ծրագրերի համար:

Յուրաքանչյուր առանձին ծրագրի համար դրանք պետք է լրացվեն մասնագիտական տվյալ ասպարեզին (առարկայական ոլորտին) բնորոշ լրացուցիչ բնութագրիչներով, որոնք պետք է սահմանեն կոնկրետ մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ կազմը:

Հավելված 1

Առկա ուսուցմամբ հետազոտողի կրթական ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, գնահատման ձևերը, ըստ տարիների ուսումնական և հետազոտական բեռնվածությունների երաշխավորվող բաշխումը

Թվանի 2	Կրթական/հետազոտական մոդուլ	Գնահատման ձևը	I	II	III
I. Ընդհանուր պատրաստվածության կրթամաս (20 կրեդիտ)					
Պարտադիր դասընթացներ					
ԱԸ 601	Գիտության փիլիսոփայություն	որակավորման քննություն	6 (96/84) ¹		
ԱԸ 602	Մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն)	որակավորման քննություն	6 (96/84)		
ԱԸ 603	Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	որակավորման ստուգարք	3 (45/45)		
ԱԸ 604	Մանկավարժություն և հոգեբանություն	ստուգարք	2 (30/30)		
ԱԸ 605	Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում	ստուգարք	1 (15/15)		
ԱԸ 606	Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ	ստուգարք	1 (20/10)		
Ընտրովի դասընթացներ					
ԱԸ 607	Մտավոր սեփականության իրավունք և պատենտագիտություն	ստուգարք	1 (20/10)		
ԱԸ 608	Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում	ստուգարք			

II. Մասնագիտական պատրաստվածության կրթամաս (22 կրեդիտ)					
Ընտրովի դասընթացներ					
ԱՄ 610	Մասնագիտական դասընթաց-1	ստուգարք	3		
ԱՄ 611	Մասնագիտական դասընթաց-2	ստուգարք		3	
ԱՄ 612	Մասնագիտական դասընթաց-3	ստուգարք			3
	Հարակից դասընթացներ մագիստրատուրայից		6		
Որակավորման քննություններ					
ԱՄ 613	Որակավորման քննություն մասնագիտությունից	որակավորման քննություն		4	
ԱՄ 614	Որակավորման քննություն մասնագիտությունից	որակավորման քննություն			3
III. Պրակտիկաներ (10 կրեդիտ)					
ԱՊ 620	Մանկավարժական (և մինչև 4 կրեդիտ՝ հետազոտական) պրակտիկա	ատեստավորում	2	4	4
IV. Հետազոտական աշխատանք (122 կրեդիտ)					
ԱՀ 630	Գիտական սեմինար և աշխատաժողովներ	մասնակցության տեղեկանք	4	4	4
ԱՀ 631	Գի աշխատանք և ատենախոսության պատրաստում	տարեկան ատեստավորում	110		
V. Ատեստավորում (6 կրեդիտ)					
ԱԱ 640	Ավարտական ատեստավորում	ատեստավորում			6
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ		58+122 =180	28+32=60	14+46=60	16+44=60

Փակագծում բերված են համապատասխանաբար լսարանային և ինքնուրույն աշխատանքի ընդհանուր ժամաքանակները: